ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5764-Ա « 24 » նոյեմբերի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 20-Ի Հ.2997-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշման N 1 հավելվածի 13-րդ կետը.

1.Երևանի քաղաքապետի 2019 թվականի օգոստոսի 20-ի «Գերեզմանատան տնօրինության կողմից մատուցվող վճարովի ծառայությունների ցանկը հաստատելու մասին» N 2997-Ա որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման հավելվածը լրացնել 29-րդ, 30-րդ և 31-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

29	Երևան համայնքին մատուցվող՝ սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների և հարազատ չունեցող հանգուցյալների համար՝ հանգուցյալի աճյունը Երևան համայնքի դիահերձարանից ավտոդիատարով (ապրանքանիշ՝ BAW, մոդել՝ M8) տեղափոխելու վճարովի ծառայություն (մեկ հուղարկավորություն)	20.000 ՀՀ դրամ
30	Քաղաքացիներին ավտոդիատարի (ապրանքանիշ՝ BAW, մոդել՝ M8) տրամադրման ծառայություն՝ հանգուցյալի աճյունը Երևան համայնքում գտնվող դիահերձարանից՝ սգո սրահ կամ հոգեհանգստի վայր, այնուհետև սգո սրահից կամ հոգեհանգստի վայրից՝ գերեզմանատուն տեղափոխելու համար (մեկ հուղարկավորություն)	50.000 ՀՀ դրամ
31	Սույն հավելվածի 30-րդ կետով նախատեսված ծառայության մատուցման շրջանակներում՝ Երևան	300 ՀՀ դրամ

	համայնքի վարչական սահմաններից դուրս՝ յուրաքանչյուր լրացուցիչ կիլոմետրի (1կմ) համար	

»:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ